

**ՀՀ Արագածոտնի մարզպետի հաշվետվությունը ՀՀ Արագածոտնի մարզում 2016 թվականին իրականացվող պետական, համայնքային և այլ ներդրումային ծրագրերի վերաբերյալ**

ՀՀ Արագածոտնի մարզում 22.12.2016 թվականի դրությամբ ըստ ոլորտների կատարվել են կամ ընթացքի մեջ են շուրջ 34 ներդրումային ծրագրեր, որոնց համար ֆինանսավորումը կազմել է՝ շուրջ 6,525,766.0 հազար դրամ, այդ թվում՝ **ՀՀ պետական բյուջեից** հատկացվել է՝ շուրջ 5,383,766.0 հազար դրամ, **բարեգործական կազմակերպությունների**, անհատ բարերարների և այլ ծրագրերի միջոցներով հատկացվել է՝ շուրջ 668,000.0 հազար դրամ, մարզի **համայնքների բյուջեներից** հատկացվել է՝ շուրջ 474,000.0 հազար դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզի թվով 114 համայնքում 2016 թվականի ընթացքում՝ սոցիալական ապահովության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում, ջրամատակարարման, ճանապարհաշինության և գազաֆիկացման բնագավառներում՝ ներդրումային գործունեություն են ծավալել հետևյալ բարեգործական կազմակերպությունները՝ «World Vision International» միջազգային ԲԿ հայաստանյան մասնաճյուղը, «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությունը, «ԱՌԴԱ» բարեգործական կազմակերպությունը, Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր» ծրագիրը, «Դիակոնիա» շվեյցարական բարեգործական հիմնադրամը, GIZ ADA ECO CONSULTING GROUP կազմակերպությունը, (COAF) Հայաստանի մանուկներ հիմնադրամը, «ԿԱՄՐՁԱԿ» սոցիալ-բարեգործական ՀԿ, «Fuller Center for Housing Armenia» բարեգործական կազմակերպություն, GLOBAL ALD NETWORK հոլանդական բարեգործական կազմակերպությունը և այլ բարեգործական կազմակերպություններ:

Բարեգործական կազմակերպություններին իրենց տարեկան աշխատանքային ծրագրերում ընդգրկելու համար ներկայացվել է տեղեկատվություն մարզում 2016 թվականին հրատապ լուծում պահանջող ծրագրերի վերաբերյալ:

Մարզ են հրավիրվել հանրապետությունում գործող տարբեր արտասահմանյան կառույցների ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, ԻԻՀ-ից, ԱՄԷ-ից, ՌԴ-ից և այլ երկրներից և տրամադրվել են սպառիչ տեղեկատվություններ, արվել են կոնկրետ առաջարկներ:

Մասնավորապես, առաջարկներ են ներկայացվել գյուղատնտեսության, սոցիալական, կրթության, առողջապահության, մշակույթի և սպորտի բնագավառներում ներդրումներ կատարելու և ներկայումս գոյություն ունեցող ֆինանսական ճեղքվածքը լրացնելու նպատակով:

**Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.**

- արդյունաբերություն՝ 1.9 %
  - գյուղատնտեսություն 10.0 %
  - շինարարություն՝ 3.7 %
  - մանրածախ առևտուր՝ 1.3 %
  - ծառայություններ՝ 0.8 %
- Մարզի գործազրկության մակարդակը կազմել է 5.7% նախորդ տարվա 5.1 %-ի փոխարեն:
- Աղքատության մակարդակը կազմել է 16.1% նախորդ տարվա 18.7 %-ի փոխարեն:

**ՀՀ առևտրում Արագածոտնի մարզի տարածքային մասնաբաժինները .**

- Արտահանում 13,709.0 ԱՄՆ հազ. դոլար, տեսակարար կշիռը 0.9 %
- Ներմուծում 49,332.7 ԱՄՆ հազ. դոլար, տեսակարար կշիռը 1.6%
- Արդյունաբերական արտադրանքի ծավալը 25,729.6 մլն. դրամ տեսակարար կշիռը 1.9 %
- Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով կազմել է 538.0 հազ. դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզին 2016թ. «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը կազմել է 176,750.0 հազ. դրամ, որից 152,413.0 հազ. դրամ:

**Ըստ տարածաշրջանների հատկացվել է**

N	Տարածաշրջան	Համայնքների քանակը	Գումարի չափը /հազ. դրամ/
1.	Աշտարակ	8	29,000.8
2.	Ապարան	16	41,215.6
3.	Արագած	18	25,894.3
4.	Թալին	27	56,302.3
	<b>Ընդամենը</b>	<b>69</b>	<b>152,413.0</b>

2016 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերի օգտագործման և վարձավճարների գանձման ցուցանիշները կազմել են՝ տրվել է վարձակալության **13736.0 հա**, վարձավճարը կազմել է **20,525.0** հազ. դրամ, գանձվել է **19,346.0** հազ. դրամ / **95%** /:

Նշեն որ 2016 թվականի ընթացքում՝ ընդհանուր առմամբ ըստ ոլորտների տնտեսվել է շուրջ **147,575.0** հազար ՀՀ դրամ, որից

- Մարզպետարան- **15 մլն**
- Առողջապահություն -**82 մլն**
- Կրթություն – **50 մլն**

#### **ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր բնութագիրը**

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքը **2756** քառ.կմ ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը կազմում է **(9.3%)**: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ **218 223.4 հա** , այդ թվում՝ վարելահողեր **54 105.7 հա** :

ՀՀ Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած, Թալին տարածաշրջանները: 2016թ. դրությամբ մարզում առկա էր **114** համայնք որից քաղաքային՝ **3**: Մշտական բնակչության թվաքանակը 2016 թվականի դրությամբ՝ **129.8** հազ.մարդ այդ թվում՝ քաղաքային **29.1** հազ. մարդ (**22.4%**), գյուղական՝ **100.7** հազ. մարդ (**77.6%**): ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը կազմում է **(4.3%)**: